**«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4»**

ք. Կապան

«18» հունվար 2021թ.

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Կարեն Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՌՈՄԱ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ռոման Խոջաբագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 19277190 (տասնինը միլիոն երկու հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _5____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է

---

1

տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

---

|

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան 13
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ [illegible]

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՌՈՄԱ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 9/5
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510003864590100
ՀՎՀՀ 00045967
Տնօրեն՝ Ռոման Խոջաբագյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՀՀ դրամ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը* | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | Հասցեն* | ենթակա *քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33211500 / 587 | Maglumi ՊՍԱ, PSA որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi ՊՍԱ որոշման թեստ (Maglumi PSA): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 1236 | 494400 | 400 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով | Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել | 2021 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում: |
| 2 | 33211500 / 588 | Maglumi Թիրեոտրոպ հորմոնի որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi թիրեոտրոպ հորմոնի հայտնաբերման թեստ (Maglumi TSH): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 598 | 598000 | 1000 | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | ·33211500 / 589 | Maglumi Ազատ T4 որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Ազատ T4 որոշման թեստ (Maglumi Free T4): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 670 | 335000 | 500 | | |
| 4 | 33211500 / 590 | Maglumi T3 ընդհանուր որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi T3 ընդհանուրի որոշման թեստ (Maglumi T3 total): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 598 | 59800 | 100 | | |
| 5 | 33211500 / 591 | Maglumi Անտի TG որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Անտի ՏԳ որոշման թեստ (Maglumi ATG): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 1337 | 133700 | 100 | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | .33211500 / 592 | Maglumi Անտի TPO որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Անտի ՏՊՈ որոշման թեստ (Maglumi Anti TPO): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 1337 | 401100 | 300 | | | |
| 7 | 33211500 / 593 | Maglumi Ց Պեպտիդ որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Ց Պեպտիդ որոշման թեստ (Maglumi C Peptide): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 2076 | 207600 | 100 | | | |
| 8 | 33211500 / 594 | Maglumi Ընդհանուր խորիոնիկ հոնադոտրոպինի որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi ընդհանուր խորիոնիկ հոնադոտրոպինի որոշման թեստ (Maglumi β HCG): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 976 | 195200 | 200 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 33211500 / 595 | Maglumi Պրոլակտին որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Պրոլակտինի որոշման թեստ (Maglumi Prolactin): Մեթոդ՝ էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 876 | 87600 | 100 | | | |
| 10 | 33211500 / 596 | Maglumi պրոգեստերոն որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi պրոգեստերոն որոշման թեստ (Maglumi Progesterone): Մեթոդ՝ էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 1332 | 133200 | 100 | | | |
| 11 | 33211500 / 597 | Maglumi Ազատ տեստոստերոն որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Ազատ տեստոստերոն որոշման թեստ (Maglumi Free Testosterone): Մեթոդ՝ էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 1592 | 159200 | 100 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | 33211500 / 598 | Maglumi Հեպատիտ B HBsAg հակածնի հայտնաբերման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Հեպատիտ B HBsAg հակածնի քանակական հայտնաբերման թեստ (Maglumi HBsAg): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 775 | 77500 | 100 | | | |
| 13 | 33211500 / 599 | Maglumi պարաթիրեոիդ հորմոնի որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi պարաթիրեոիդ հորմոնի որոշման թեստ (Maglumi intact PTH): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 2856 | 285600 | 100 | | | |
| 14 | 33211500 / 600 | Maglumi Վիտամին B12 որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Վիտամին B12 որոշման թեստ (Maglumi Vitamin B12): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 3776 | 377600 | 100 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 33211500 / 601 | Maglumi ֆերրիտինի որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi ֆերրիտինի որոշման թեստ (Maglumi Ferritin): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 988 | 988000 | 1000 | | | |
| 16 | 33211500 / 602 | Maglumi իմունոգլոբուլին E որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi իմունոգլոբուլին E որոշման թեստ (Maglumi IgE): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 1286 | 128600 | 100 | | | |
| 17 | 33211500 / 603 | Maglumi ԴՀԷԱ-Ս որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi ԴՀԷԱ-Ս որոշման թեստ (Maglumi DHEA-S): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 2376 | 237600 | 100 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 33211500 / 604 | Maglumi բարձր զգայունության Տրոպոնին I որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi բարձր զգայունության Տրոպոնին I որոշման թեստ (Maglumi hs cTnI): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 1344 | 672000 | 500 | | | |
| 19 | 33211500 / 605 | Maglumi Վիտամին Դ որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Վիտամին Դ որոշման թեստ (Maglumi 25-OH-Vitamin D): Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 2707 | 1353500 | 500 | | | |
| 20 | 33211500 / 606 | Maglumi ստուգիչ լուծույթ Light Check | SNIBE DIAGNOSTIC | Maglumi ստուգիչ լուծույթ Light Check, նախատեսված maglumi 600 վերլուծիչով աշխատելու համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 2մլ±10%: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 15750 | 78750 | 5 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 33211500 / 607 | Maglumi աշխատանքային լուծույթ Starter 1+2 | SNIBE DIAGNOSTIC | Maglumi աշխատանքային լուծույթ Starter 1+2, նախատեսված maglumi 600 վերլուծիչով աշխատելու համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 2x230մլ: Պահպանման պայմանները՝ 15-30°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 78370 | 2351100 | 30 | | | |
| 22 | 33211500 / 608 | Maglumi լվացող լուծույթ wash concentrate | SNIBE DIAGNOSTIC | Maglumi լվացող լուծույթ, նախատեսված maglumi 600 վերլուծիչով աշխատելու համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 710մլ±10%: Պահպանման պայմանները՝ 15-30°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 35400 | 1239000 | 35 | | | |
| 23 | 33211500 / 609 | Maglumi մաքրող լուծույթ system tubing cleaning | SNIBE DIAGNOSTIC | Maglumi մաքրող լուծույթ system tubing cleaning, նախատեսված maglumi 600 վերլուծիչով աշխատելու համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 500մլ±10%: Պահպանման պայմանները՝ 15-30°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 78370 | 156740 | 2 | | | |
| 24 | 33191310 /503 | Maglumi աշխատանքայի ն փորձանոթ reaction module | SNIBE DIAGNOSTIC | Maglumi աշխատանքային փորձանոթ (reaction module) նախատեսված maglumi 600 վերլուծիչով աշխատելու համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 6*64 կյուվետ/տուփ: Պահպանման պայմանները՝ 15-30°C ջերմաստիճանում: Որակի սերտիֆիկատների առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: | հատ | 453 | 1359000 | 3000 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 33211500 / 610 | Maglumi LH լյուտեինացնող հորմոնի որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 և Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված Լյուտեինացնող հորմոնի որոշման թեստ (Maglumi LH): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | հատ | 948 | 94800 | 100 | | | |
| 26 | 33211500 / 611 | Maglumi FSH ֆոլիկուլ ստիմուլացնող հորմոնի որոշման թեստ | SNIBE DIAGNOSTIC | Maglumi 600 և Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված Ֆոլիկուլ խթանող հորմոնի որոշման թեստ-հավաքածու (Maglumi FSH): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող ' նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | հատ | 948 | 94800 | 100 | | | |
| 27 | 33211500 / 612 | Թեսթ հավաքածու FLEX SC9 | SNIBE DIAGNOSTIC | Թեսթ հավաքածու FLEX SC9, նախատեսված արյան գազերի վերլուծիչի համար: Չափող պարամետրերը առնվազն՝ PH, PO2, PCO2,Na, K, Ca, Cl: Թեսթ հավաքածուն պետք է համատեղելի լինի ABL9 մոդելի արյան գազերի վերլուծիչի հետ: Հավաքածուն պետք է լինի նախատեսված 200 հետազոտությունների համար: Պիտանելիության ժամկետը տեղադրման պահից առնվազն 60 օր: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները 2-8°C: | հատ | 653400 | 5227200 | 8 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | 33211500 / 613 | Աշխատանքայի ն լուծույթ FLEX 9SP | SNIBE DIAGNOSTIC | Աշխատանքային լուծույթ FLEX 9SP, նախատեսված արյան գազերի վերլուծիչի համար: Աշխատանքային լուծույթը պետք է համատեղելի լինի ABL9 մոդելի արյան գազերի վերլուծիչի հետ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները 2-25°C: | հատ | 205700 | 1645600 | 8 | | | |
| 29 | 33211500 / 614 | Ջերմային թուղթ՝ SC9 տպիչի թուղթ | SNIBE DIAGNOSTIC | Ջերմային թուղթ նախատեսված ABL9 արյան գազերի վերլուծիչի համար: Չափեր՝ 80մմ*40մմ(±20%) 20մ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները 2-30°C: | հատ | 2100 | 105000 | 50 | | | |

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

****Ծանոթություն**

****Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը***

***ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,***

***բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,***

**** Որակի սերտիֆիկատների առկայություն***

***Ծանոթություն** – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ **«կամ համարժեք»** բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

**• Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :**

******Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ. Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:***

*******Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:***

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**ԳՆՈՐԴ**
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան 13
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ [illegible]

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՌՈՄԱ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 9/5
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510003864590100
ՀՎՀՀ 00045967
Տնօրեն՝ Ռոմա Խոջաբագյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվ...
«18» հունվար 2021թ. կնքվա...
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| | | | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33211500 /587 | Maglumi ՊՍԱ, PSA որոշման թեստ | | 123600 | 123600 | 247200 | 247200 | 247200 | 370800 | 370800 | 370800 | 494400 | 494400 | 494400 | 494400 |
| 2 | 33211500 /588 | Maglumi Թիրեոտրոպ հորմոնի որոշման թեստ | | 149500 | 149500 | 299000 | 299000 | 299000 | 448500 | 448500 | 448500 | 598000 | 598000 | 598000 | 598000 |
| 3 | 33211500 /589 | Maglumi Ազատ T4 որոշման թեստ | | 83750 | 83750 | 167500 | 167500 | 167500 | 251250 | 251250 | 251250 | 335000 | 335000 | 335000 | 335000 |
| 4 | 33211500 /590 | Maglumi T3 ընդհանուր որոշման թոստ | | 14950 | 14950 | 29900 | 29900 | 29900 | 44850 | 44850 | 44850 | 59800 | 59800 | 59800 | 59800 |
| 5 | 33211500 /591 | Maglumi Անտի TG որոշման թեստ | | 33425 | 33425 | 66850 | 66850 | 66850 | 100275 | 100275 | 100275 | 133700 | 133700 | 133700 | 133700 |
| 6 | 33211500 /592 | Maglumi Անտի TPO որոշման թեստ | | 100275 | 100275 | 200550 | 200550 | 200550 | 300825 | 300825 | 300825 | 401100 | 401100 | 401100 | 401100 |
| 7 | 33211500 /593 | Maglumi Ց Պեպտիդ որոշման թեստ | | 51900 | 51900 | 103800 | 103800 | 103800 | 155700 | 155700 | 155700 | 207600 | 207600 | 207600 | 207600 |
| 8 | 33211500 /594 | Maglumi Ընդհանուր խորիոնիկ հոնադոտրոպինի որոշման թեստ | | 48800 | 48800 | 97600 | 97600 | 97600 | 146400 | 146400 | 146400 | 195200 | 195200 | 195200 | 195200 |
| 9 | 33211500 /595 | Maglumi Պրոլակտին որոշման թեստ | | 21900 | 21900 | 43800 | 43800 | 43800 | 65700 | 65700 | 65700 | 87600 | 87600 | 87600 | 87600 |
| 10 | 33211500 /596 | Maglumi պրոգեստերոն որոշման թեստ | | 33300 | 33300 | 66600 | 66600 | 66600 | 99900 | 99900 | 99900 | 133200 | 133200 | 133200 | 133200 |
| 11 | 33211500 /597 | Maglumi Ազատ տեստոստերոն որոշման թեստ | | 39800 | 39800 | 79600 | 79600 | 79600 | 119400 | 119400 | 119400 | 159200 | 159200 | 159200 | 159200 |
| 12 | 33211500 /598 | Maglumi Հեպատիտ B HBsAg հակածնի հայտնաբերման թեստ | | 19375 | 19375 | 38750 | 38750 | 38750 | 58125 | 58125 | 58125 | 77500 | 77500 | 77500 | 77500 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 33211500 /599 | Maglumi պարաթիրեոիդ հորմոնի որոշման թեստ | | 71400 | 71400 | 142800 | 142800 | 142800 | 214200 | 214200 | 214200 | 285600 | 285600 | 285600 | 285600 |
| 14 | 33211500 /600 | Maglumi Վիտամին B12 որոշման թեստ | | 94400 | 94400 | 188800 | 188800 | 188800 | 283200 | 283200 | 283200 | 377600 | 377600 | 377600 | 377600 |
| 15 | 33211500 /601 | Maglumi ֆերրիտինի որոշման թեստ | | 247000 | 247000 | 494000 | 494000 | 494000 | 741000 | 741000 | 741000 | 988000 | 988000 | 988000 | 988000 |
| 16 | 33211500 /602 | Maglumi իմունոգլոբուլին E որոշման թեստ | | 32150 | 32150 | 64300 | 64300 | 64300 | 96450 | 96450 | 96450 | 128600 | 128600 | 128600 | 128600 |
| 17 | 33211500 /603 | Maglumi ԴՀԵԱ-Ս որոշման թեստ | | 59400 | 59400 | 118800 | 118800 | 118800 | 178200 | 178200 | 178200 | 237600 | 237600 | 237600 | 237600 |
| 18 | 33211500 /604 | Maglumi բարձր զգայունության Տրոպոնին I որոշման թեստ | | 168000 | 168000 | 336000 | 336000 | 336000 | 504000 | 504000 | 504000 | 672000 | 672000 | 672000 | 672000 |
| 19 | 33211500 /605 | Maglumi Վիտամին Դ որոշման թեստ | | 338375 | 338375 | 676750 | 676750 | 676750 | 1015125 | 1015125 | 1015125 | 1353500 | 1353500 | 1353500 | 1353500 |
| 20 | 33211500 /606 | Maglumi ստուգիչ լուծույթ Light Check | | 19687.5 | 19687.5 | 39375 | 39375 | 39375 | 59062.5 | 59062.5 | 59062.5 | 78750 | 78750 | 78750 | 78750 |
| 21 | 33211500 /607 | Maglumi աշխատանքային լուծույթ Starter 1+2 | | 587775 | 587775 | 1175550 | 1175550 | 1175550 | 1763325 | 1763325 | 1763325 | 2351100 | 2351100 | 2351100 | 2351100 |
| 22 | 33211500 /608 | Maglumi լվացող լուծույթ wash concentrate | | 309750 | 309750 | 619500 | 619500 | 619500 | 929250 | 929250 | 929250 | 1239000 | 1239000 | 1239000 | 1239000 |
| 23 | 33211500 /609 | Maglumi մաքրող լուծույթ system tubing cleaning | | 39185 | 39185 | 78370 | 78370 | 78370 | 117555 | 117555 | 117555 | 156740 | 156740 | 156740 | 156740 |
| 24 | 33191310 /503 | Maglumi աշխատանքային փորձանոթ reaction module | | 339750 | 339750 | 679500 | 679500 | 679500 | 1019250 | 1019250 | 1019250 | 1359000 | 1359000 | 1359000 | 1359000 |
| 25 | 33211500 /610 | Maglumi LH լյուտեինացնող հորմոնի որոշման թեստ | | 23700 | 23700 | 47400 | 47400 | 47400 | 71100 | 71100 | 71100 | 94800 | 94800 | 94800 | 94800 |
| 26 | 33211500 /611 | Maglumi FSH ֆոլիկուլ ստիմուլացնող հորմոնի որոշման թեստ | | 23700 | 23700 | 47400 | 47400 | 47400 | 71100 | 71100 | 71100 | 94800 | 94800 | 94800 | 94800 |
| 27 | 33211500 /612 | Թեսթ հավաքածու FLEX SC9 | | 1306800 | 1306800 | 2613600 | 2613600 | 2613600 | 3920400 | 3920400 | 3920400 | 5227200 | 5227200 | 5227200 | 5227200 |
| 28 | 33211500 /613 | Աշխատանքային լուծույթ FLEX 9SP | | 411400 | 411400 | 822800 | 822800 | 822800 | 1234200 | 1234200 | 1234200 | 1645600 | 1645600 | 1645600 | 1645600 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | 33211500 /614 | Ջերմային թուղթ՝ SC9 տպիչի թուղթ | | 26250 | 26250 | 52500 | 52500 | 52500 | 78750 | 78750 | 78750 | 105000 | 105000 | 105000 | 1050[illegible] |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, [illegible]եփանյան 13
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
[illegible] 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ [illegible]

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՌՈՄԱ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 9/5
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510003864590100
ՀՎՀՀ 00045967
Տնօրեն՝ Ռոման Խոջաբագյան

/ստորագրություն/
Կ.Տ